

**5.7. Բնակարանային ֆոնդի և այլ նշանակության օբյեկտների (կոմունալ-կենցաղային և արտադրական) ջերմամատակարարումը 2002թ.**

Բնակչությանը և կոմունալ-կենցաղային կարիքների համար ջերմաէներգիա մատակարարող կազմակերպություններում առկա 277 կաթսայատներից 2002թ. գործել են 18-ը, որից 14-ը՝ Երևան քաղաքում: Ամփոփ ցուցանիշներում չեն ներառվել ջերմարտադրող այն կազմակերպությունների հաշվետվային տվյալները, որոնց արտադրած ջերմային էներգիան ծախսվել է միայն արտադրական կարիքների համար: 18 կաթսայատների համակարգում գործել են 33 կաթսաներ: Աշխատող կաթսայատների գումարային հզորությունը կազմել է 1091 Գկալ/ժ (1 Գկալ=10<sup>9</sup> կալ): 2002թ. ջեռուցման ժամանակահատվածում բոլոր կաթսայատների կողմից ջերմաէներգիայի արտադրության համար օգտագործվել է 30.2 մլն. խոր. մ գազ, այդ թվում Երևան քաղաքում՝ 19.5 մլն. խոր. մ:

Գործող ջերմային ցանցերի գումարային երկարությունը (երկխողովակային հաշվարկմամբ) կազմել է 872.2 կմ, որի 46.9%-ը կարիք ունի փոխարինման, 35.3%-ը՝ վերանորոգման: Գոլորշու ցանցերի գումարային երկարությունը կազմել է 48.0 կմ:

2002թ. ընթացքում գործող կաթսայատների կողմից արտադրվել է 545.0 հազ. Գկալ ջերմաէներգիա, որից Երևան քաղաքում՝ 371.6 հազ. Գկալ: Ջերմաէներգիայի ընդհանուր կորուստները կազմել են 100.4 հազ. Գկալ կամ 18.4%, Երևան քաղաքում՝ համապատասխանաբար 57.3 հազ. Գկալ և 15.4%:

**Բոլոր սպառողներին բաց թողնված ջերմաէներգիայի քանակը**

	Բոլոր սպառողներին բաց թողնված ջերմաէներգիան, Գկալ	%ով փաստացի ստացված ջերմաէներգիայի ընդհանուր ծավալից		
		բնակչությանը	կոմունալ-կենցաղային օբյեկտներին	արտադրությանը
Ընդամենը	443268	46.1	13.6	40.3
այդ թվում՝ ք. Երևան	314373	33.9	12.2	53.9

Հանրապետության 48 քաղաքներից բնակչությանը ջերմային էներգիա է մատակարարվել Երևան, Գյումրի, Հրազդան և Ջերմուկ քաղաքներում: Տարվա ընթացքում ջեռուցվել է 1327 բազմաբնակարան շենք և 735 բնակելի տուն: Հինգ և ավելի հարկանի ջեռուցված շենքերի քանակը կազմել է բազմաբնակարան շենքերի 66.9%-ը: Երևան քաղաքում այդ ցուցանիշը կազմել է 97.7%: Բազմաբնակարան շենքերում ջեռուցված բնակելի մակերեսը կազմել է 2487.5 հազ. քառ. մ, որից՝ 1957.9 հազ. քառ. մ-ը՝ հինգ և ավելի հարկանի շենքերում:

2002թ. հանրապետությունում գործող ջերմարտադրող և ջերմամատակարարող կազմակերպությունների արտադրական կարողությունների միջին տարեկան հաշվեկշռային արժեքը կազմել է 1915.3 մլն. դրամ: Ընդհանուր մուտքերը կազմել են 2307.3 մլն. դրամ, այդ թվում 145.0 մլն. դրամը՝ բյուջեից, 2161.5 մլն. դրամը՝ ջերմաէներգիայի իրացումից, 0.8 մլն. դրամը՝ այլ մուտքեր: Ջերմաէներգիայի իրացումից ստացված մուտքերի 37.4%-ը բնակչությունից է:

Ծախսերի ընդհանուր գումարը կազմել է 3264.6 մլն. դրամ: Ըստ ծախսումների առանձին հոդվածների, ծախսերի պատկերը հետևյալն է. 86.4%-ը նյութական ծախսերն են, ոչ նյութական ծառայությունների վճարումները՝ 1.1%-ը, աշխատավարձը և դրան հավասարեցված

## 5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԿԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

վճարումները՝ 6.5%-ը, պարտադիր սոցիալական ապահովագրական վճարները՝ 1.5%-ը, մնացածն այլ բնույթի ծախսեր են:

Հանրապետությունում ջերմաէներգիայի մատակարարումից տարիների ընթացքում կուտակվել է 18448.7 մլն.դրամի պարտք, որից բնակչությունից՝ 6264.4 մլն.դրամի կամ 34.0%, իսկ 2002թ.՝ 3397.4 մլն.դրամի, որից բնակչությունից՝ 1657.6 մլն. դրամի կամ 48.8%:

Տարիների ընթացքում ջերմաէներգիայի մատակարարումից կուտակված պարտքերի 73.2%-ը բաժին է ընկել Երևան քաղաքին: 2002թ. այդ ցուցանիշը կազմել է 55.0%: